

## Տ. ՄԱՐԿՈՍ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Հրաչ)

Ծնվել է 1973 թ. հունվարի 17-ին, Անիի շրջանի Բարձրաշեն գյուղում:

1979-1990 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի համար 5 միջնակարգ դպրոցը:

1990-1996 թթ. ուսանել և ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը:

1996 թվականին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա արքեպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1996-1998 թթ. աշխատել է Ալեք և Մարի Մանուկյանների անվան գանձատանը:

1997 թ. պաշտպանել է ավարտաճառ «Վաղարշապատի դպրոցը 17-րդ դարում» թեմայով՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

1998 թ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի կարգադրությամբ մեկնել է Ազգային բանակ՝ հոգևոր ծառայության: